կատարէ․ ներկային կը մնայ նոյն ընտրութիւն և շարունակութիւն կամ վերջ տալը։ Վերջապէս անցեալէն սորվ պէտք է ուսած լինիմք, որ մեր Ազգի համար անմիաբանութիւնը և անտարբերութիւնը ի՛նչ վտանգ սպառնացած է և 'կ'սպառնայ, և թէ ցարդ ի՛նչպէս կարողացած եմք խուսափել և յետ այսորիկ ի՛նչպէս կարեմք զերծանիլ և որպիսի՞ միջոցներով։ Մ՛եք կը կրկնեմք և կ՚երեքկնեմք, որ՝ անշուշտ ազգային կրթութեան և լուսաւորութեան ընդհանուր տարածմամբ, որով Ազգային միութիւն և ամբողջութիւն և իրական յառաջադիմութիւն կ՚արտադրուի անտարակոյս։

Մ՛եք երբէք իրաւունք չը պիտի ունենամք մոռնալու՝ և գանգատելու այսինչ կամ այնինչ անձէն և կամ ընկերութիւնէն, եթէ մեզ փոս կը պեղէ (թէ և հակառակ մարդասիրական վսեմ սկզբանց)․ որովհետև նա ևս ունի առանձին ցեղական եռանդ և զգացմունք և հանդարտ խիղճ այդպէս ջանալու․ բայց յա՛յնժամ ամօթ է մեզ և նախատինք, երբ մեք իսկ մեր պարտաւորութիւնք և եռանդներ չ՚զգալով անտարբեր կը կենամք․ և առանց գործելու և ջանալու երեւակայական սնոտի և վիպական նպատակներ կ՚երազեմք․ այո՛, նուիրական իմն պարտք է մեզ ևս ի՛նչ որ արժան և անհրաժեշտ է, գործել ի սէր Եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Ազգի։

Զայս ընդունելով անցեալէն փորձառութեամբ՝ մնացեալն և ներկայն կը պահանջէ զայն, ուստի սորա համար պիտի գործեմք փորձառութեամբ ներկային մէջ։ Եւ ինչ որ անցեալին մէջ ձեռնարկուած է մեր Ազգի նպատակաւ՝ անձնանուէր Ազգայնոց շնորհիւ, առանց սնոտի բծախնդրութեան, առանց անօգուտ վէճից և կուսակցութեանց, առանց կրօնական խնդիրներ յուզելոյ և զազգ պառակտելոյ, առանց օտարից օգտին ծառայելոյ, առանց անձնականը քան զԱզգին օգուտ նախադասելու՝ շարունակեմք նոր ներկայի մէջ՝ ջանալ և գործել Ազգի և Եկեղեցւոյ ապագայի անձկանօք։ Յուսամք և աշխատիմք ամենայն անդ երկսեռ ուսումնարաններ ունենալ հիմնաւոր եղանակօք և կանոնօք բարեկարգուած․ որովք՝ ուսումը, գիտութիւնը, լուսաւորութիւնը և կրթութիւնը կընդհանրանայ մեր Ազգայնոց մէջ։ Եւ այսպիսի անձկանօք և նպատակօք պիտի դիմեմք և մտնեմք նոր տարիներ, զորս և պիտի սիրեմք շնորհաւորել բարեմաղթելով միմեանց, ինչպէս և Արարատ[1] այսպիսի բաղձանօք և ակնկալութեամբ կը շնորհաւորէ և կը բարեմաղթէ իւր հարազատ և սիրելի որդւոց համար՝ներկայ 1870 նոր տարւոյ մուտքը, խնդրելով միանգամայն՝ զի իւր հարազատ և սիրեցեալ որդիք բարեհաճին ամեն Ազգօգուտ յօրդորանաց սիրալիր ընդունելութեան և բարի բարի գործոց և ձեռնարկութեանց նախանձիլ և հետևիլ խանդակաթ։ Ա․

---

[1] Շնորհաւոր քեզ նոր տարի, Արարատ․
Նո՛ր զարդարեա՛լ [illegible]։

Ողջո՛յն քեզ, բա՛րձր Արարատ, ողջո՛յն Նոյեան Տապանին․
Պարծա՛նք ողջամբ 'ի քո տուն՝ յոտար ուղղոյդ բազմամփիշտ․
Շրջանդ գեհին, գիտե՞ս դու, շափեաց Արփին ոսկեհեր,
Նորոգ եւ ձեռնամուխ քնքուշ մատամբք լուսաբեր։

Աշխարհակալ ջուրց հեղեղ այնինչ պատէր զերկրաւ շուրջ,
Տխուր դէքուն մահաբեր սրսկէր 'ի կեանըս հանուրց,
Զայն հեղեղն որոտայ յաւիտենից յանդնդոց,
«Երկինք, յինէն առէք անձն, թէ ոչ՝ առից զձեզ յիմ ծոց»:
Մինչդեռ Թաբոր և Սինայ, Հերմոն, Նաւա և Վասուպ
Վերամբք բոլոր խոնարհեալ՝ ջուրց խորդային յալեաց ծուփ,
Բայց ծերունի դէմդ գագաթ տեսեալ Նոյին ալևոր՝
«Ի քեզ, ասէ, Արարատ, Տապանս յանձնեմ հրաշաւոր»:
Ո՛վ ես, ասէ, հինաւուրց 'ի բով փորձեալ աշխարհի.
Ո՛վ էք միայն պահպանեն տուեալ զաւանդն 'ի յարգի.
Ընկալ դու՝ իմ Արարատ, զիմ Լաստափայտ 'ի քո ուս,
Պարք Աստեղաց քանի կան, և կայ Արփին գեղալոյս:
Ընդ հաշտութեան նշան սուրբ կազմեալ Երկինդ 'ի ստորոտ՝
Ուխէր սրտին զուրբեալ յԱթոռ Վեհին անկարօտ,
«Իմ սրտի ջերմ կնդրուկ քեզ հաճեսցի, ասէ, Տէր,
Ի սէր Սեթայ Նախնույ Հօրս և Աբելայ որբասէր:
Օրհնեա՛, Աստուած իմ հզօր, Տապանակիրս Մասիս,
Ուր երախտեաց մեծագործ պահեմ անջինջ զմաս յիս.
Մինչ գոռային ալեք ջուրց աւխ 'ի դոչ խոխտահունչ,
Ի հէջին փայտ Տապանի լռեցուցիր անմռունչ:
Նաւեցայ, Տէր, ընդ Սորա Թշնամեաց շուրթն և լեզու.
Զի Արարատ կացցէ ցանկ ընդ դէմ Նոյա ահարկու.
Հայրենաւանդ 'ի Կրօն սուրբ պահեն զՍա հաստատուն,
Վեհք Հայրապետք հոգեկիր 'ի սմա կացցեն կանգնալուն»:
Նոր էր յայնժամ նոր տարի քեզ, Արարատ, նոր կաղանդ,
Քանզի յերկրէ ջնջեցաւ մոլեգնելոց հին աղանդ.
Աշխարհ 'ի քէն աճում նոր, նոր ընկալաւ և Կրօն,
Զոր ողջունեաց հաւատով սուրբ Ծերունին գերագօն:
Այս բանիս արձագանգ տայցեն լերինք համօրէն,
Տայցէ և իմն Արագած, որ ինձ խնամեաց հայրօրէն,
Ընդ իս զերբեանց կցորդեալ զանոյշ ձայնիւն զգեղգեղ՝
Յօրհներգ կացցուք 'ի բաղդիդ և նոր տարւոյդ շնորհաղեղ:
Յուլիանէն չարանենգ չեկա՞ց արդեօք քեզ 'ի վէգ,
Եւ նորա պիղծ ժանտ լեզու չարա՞ր զքեզ սրտաբեկ.
Գիտեմ, այո՛ որոտաց, բայց զայն լեզու հայհոյիչ՝
Մեր Հայրապետ Վեհընտիր կարկեաց բանիւ աղօթից.
Արմունջ սրտիս Թող ելցէ վերին կապոյտն 'ի կամար,
Տալ Ձեզ նոր սիրտ, նոր հոգի և նոր եռանդն Ազգաւոր.

Զի Հայկական Սոփերք սուրբ Նախնեաց մերոց հոգեկէց
Ցունջեան 'ի լոյս եկեալսն խաւարայգեւն 'ի բանտից։
Գնաս բարեաւ, Երարմա, սրտի Հայոց քաջալեր.
Գնա՛, զայս որ բաղձաւոր սիրով նոցա ունելն,
Շարժեա՛ սիրոյդ զմանկոյն յանհուն ծովուցն աստարեղ.
Գնա՛, զպանդխտեալ՝ խեղճ Հայկ զԹով գգուել, Տէր ընդ քեզ։

Մէ-բ-ն Խ-:ֆիր-գ-ս Վ-ն-էշ Մ-ն-ւ-էլ Ս-րէ-ւ-ւ-է Ժ-մ-ն-կ-ն-ն-ջ,

# ԿՐՕՆԱԿԱՆ

## Եպիփան Եպիսկոպոս

### ՑԻ ՆՈՐԻՆ ՃԱՌ

(Շ-բ--ն-է--րէ-ն)

Երգ որ ծածկայեան է յամենայնի՝ Յիսուս[1], զիտաց եւ զնոյայն. և 'ի նմին աւուր միաշաբաթւոջ, յորում և պատուեցաւ ուսովք՝ ձիթենեաց և արմաւենեօք՝ մտանելով 'ի քաղաքն Երուսաղէմ։ Եւ էր ըստ արեգական տօմարին յաղթելի ամսոյ 'ի վեցն։ Նոյնպէս զնկեցաւ լուսնին տասն, յոր և զզատկին արգելուին պատրաստ զատնել զատկին զենմանն։ Օն իսկ և նոյն ինքն էական Բանն Հօր՝ յոյնմ նուագի աւետեօք Հրեշտակապետին Գաբրիէլի՝ արգելեցաւ յարգանդի կուսին վասն Արարածոց փրկութեան. 'ի ժ. նիսանի։ Այլ և արար 'ի նմին աւուր իրս խորհրդական և փրկարար։

Քանզի և 'ի մտանելն իւրում 'ի տուն Գամաղիէլի՝ հաւատարիմ Վարդապետի, և նորա որպէս ուսեալ 'ի մանկանցն գնաց ընդ յառաջ Տեառն Յիսուսի, և ունէր պատուական վուշ մեծագոյն որպէս զրկաչափ մի պատուական և սպիտակ որպէս ձիւն, յօրինեալ ծայրօք որպէս Թագաւորական ծիրանի մետաքս կարմիր և կանանչ փողեալ ոսկւով, և տարածեաց զայն առաջի Տեառնորդւոյն արարածոց Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ[2]։ Եւ Տէր խոնարհեալ ամբարձ զայն երկու եւ ձեռօքն, և որպէս թէ լուացեալ եւ էր, և արկ խաչանմանն զԱստուածային պատկերաւն՝ վերուստ 'ի վայր բերելով։

Օն անդր և նկարեցաւ 'ի զաստառակին՝ պատկերն արարչագործ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, նոյնպէս 'ի ժ. լուսնական ամսոյ՝ որպէս և վերագոյն եւ ասացաք. և ետ 'ի Թովմաս. և տեսեալ ամենեցուն երկրպագեցին Աստուածային նկարագրեալ պատկերին. և Թովմաս ծալեալ զԹուղթն և զսուրբ զաստառակն և պահեալ 'ի վարշամակի, որ և այն զեղեցիկ և սպիտակ էր

1) յՅրդն պակասէր Յէ----.

2) յ2րդն Մէ---.